

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ
ՆԵՐԿԱՅԱԳՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում պետության կողմից պետական բաժնեմասի կառավարման լիազոր ներկայացուցիչների (այսուհետ՝ լիազոր ներկայացուցիչ) ընտրության նպատակով մրցույթի անցկացման գործընթացը:

2. Լիազոր ներկայացուցիչները նշանակվում են մրցութային կարգով՝ բացառությամբ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքի:

3. Անհրաժեշտության դեպքում, ելնելով առևտրային կազմակերպությունների առանձնահատկություններից և գործունեության բնույթից, պետական կառավարման համապատասխան մարմնի առաջարկությամբ, լիազոր ներկայացուցիչներ կարող են նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

4. Լիազոր ներկայացուցչի վարձատրության չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից (այսուհետ՝ վարչություն)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և իր գործառույթներն իրականացնելու նպատակով վարչու-

թյան հետ կնքված աշխատանքային պայմանագրի դրույթներին համապատասխան: Ելնելով ընկերության առանձնահատկություններից՝ աշխատանքային պայմանագրով կարող են սահմանվել հատուկ պայմաններ և լիազոր ներկայացուցչի կողմից իրականացվելիք գործառույթներ:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

5. Սույն կարգով լիազոր ներկայացուցիչ նշանակելու կամ լիազոր ներկայացուցչի թափուր պաշտոն առաջանալու դեպքում համապատասխան պետական կառավարման մարմինը եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է վարչությանը՝ միաժամանակ ներկայացնելով երեք թեկնածուի՝ մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար:

6. Լիազոր ներկայացուցիչների ընտրության մրցութին, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ վիճակից, մասնակցելու իրավունք ունեն հայերենին տիրապետող, գործունակ, բարձրագույն կրթություն ունեցող և կառավարման ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր՝

1) դատական կարգով չեն ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

2) չեն տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը կարող է խոչընդոտել լիազոր ներկայացուցչի ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը:

3) չեն խուսափել ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

4) նախորդ երեք տարվա ընթացքում չեն զբաղեցրել սնանկացման պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար պաշտոններ:

7. Լիազոր ներկայացուցիչների ընտրության համար մրցույթ անցկացնելու մասին որոշումն ընդունում է վարչությունը՝ դրա մասին հայտարարություն տեղադրելով վարչության պաշտոնական ինտերնետային կայքում և www.azdarar.am կայքում:

8. Լիազոր ներկայացուցիչների ընտրության համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) ընկերության անվանումը, որտեղ նախատեսվում է ընտրել լիազոր ներկայացուցիչ.
2) ընկերությունում պետական մասնակցության չափը (հազար դրամով և տոկոսով՝ կանոնադրական կապիտալում).

3) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը.

4) մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները.

5) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (տեղեկատվության) ցանկը.

6) փաստաթղթերը ներկայացնելու վայրը և վերջնաժամկետը:

9. Լիազոր ներկայացուցիչների մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները պետք է ներկայացնեն առնվազն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում.

2) անձնագրի պատճենը.

3) մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.

4) քաղվածք աշխատանքային գրքույկից.

5) ինքնակենսագրություն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.

7) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).

8) տեղեկանք մշտական բնակության վայրից.

9) արական սեռի անձանց համար՝ նաև զինվորական գրքույկը կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

10. Բացի սույն կարգի 8-րդ և 9-րդ կետերով նախատեսվածից՝ այլ փաստաթղթեր ներկայացնելու պահանջն արգելվում է: Մրցույթի մասնակիցները կարող են ներկայացնել նաև այլ լրացուցիչ փաստաթղթեր՝ իրենց հայեցողությամբ:

11. Մրցույթի մասնակիցը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ ներկայացնելով նաև անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթ:

12. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է մրցույթի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

III. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

13. Լիազոր ներկայացուցիչների ընտրության մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) պետք է կազմված լինի 6 անդամից, որից 3-ը վարչության ներկայացուցիչներն են, 3-ը՝ պետական մասնակցությամբ առևտրային համապատասխան կազմակերպությունում բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող պետական կառավարման մարմնի ներկայացուցիչները: Մրցութային հանձնաժողովի կազմը սահմանվում է վարչության պետի հրամանով, որով վարչության ներկայացուցիչներից նշանակվում է նաև հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

14. Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված ժամկետում՝ լիազոր ներկայացուցչի մրցույթին մասնակցող անձանց անմիջական մասնակցությամբ՝ փաստաթղթերի ուսումնասիրության և հարցազրույցի միջոցով:

15. Հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և ընդունում որոշում մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ տվյալ մրցույթին անձի մասնակցությունը մերժելու մասին:

16. Հանձնաժողովն ընդունում է մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու մասին որոշում, եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին կամ թերի են: Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատում է մրցույթի մասնակիցների (այսուհետ՝ մասնակից) ցուցակը: Այդ որոշումը հրապարակվում է մրցույթն սկսվելուց առաջ:

17. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներից ոչ մեկին թույլ չի տալիս մասնակցել մրցույթին, կամ, եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ ոք չի ներկայացել, կամ, եթե մրցույթին մասնակցության համար որևէ դիմում չի ներկայացվել, ապա հանձնաժողովն ընդունում է որոշում մրցույթը չկայացած համարելու մասին:

18. Եթե հանձնաժողովն իրավագոր չէ (նիստին չի մասնակցում հանձնաժողովի անդամների կեսից ավելին), ապա մրցույթը համարվում է չկայացած, և հայտարարվում է կրկնակի մրցույթ: Հանձնաժողովի նիստին ներկա անդամները դրա մասին կազմում են արձանագրություն և ստորագրում այն:

19. Կրկնակի մրցույթի ժամանակ մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում, և այն անցկացվում է մրցույթի օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ ընդհանուր հիմունքներով:

20. Հանձնաժողովը մրցույթի յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

21. Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի անդամները մրցույթի մասնակցին տալիս են բանավոր հարցեր, ընդ որում, յուրաքանչյուր մասնակցի կարող է տրվել 7 հարց: Հարցազրույցն արձանագրվում և ձայնագրվում է:

22. Հարցերը կարող են տրվել՝

1) լիազոր ներկայացուցչի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի, այդ թվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, համապատասխան ոլորտի օրենսդրության և այլ իրավական ակտերի իմացությունն ստուգելու նպատակով.

2) կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողությունն ստուգելու նպատակով.

3) հայերենին տիրապետելու հանգամանքն ստուգելու նպատակով.

4) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողությունն ստուգելու նպատակով.

5) համակարգչով և այլ ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակությունն ստուգելու նպատակով.

6) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտությունն ստուգելու նպատակով:

23. Մրցույթի մասնակցի՝ հարցերին տրված պատասխանները գնահատվում են (ճիշտ կամ սխալ) հարց տվող հանձնաժողովի անդամի կողմից: Եթե մրցույթի մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ, ապա հանձնաժողովի՝ գնահատական տվող անդամը պետք է հնչեցնի ճիշտ պատասխանը:

24. Մրցույթի արդյունքում կազմվում է արձանագրություն, որտեղ ամրագրվում է յուրաքանչյուր հարցի վերաբերյալ մրցույթի մասնակցի տված պատասխանը, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականները (ճիշտ կամ սխալ լինելը), իսկ սխալ պատասխանի դեպքում հարց տվողի կողմից հնչեցված ճիշտ պատասխանը:

25. Արձանագրությունն ստորագրվում է այն կազմողի, մրցույթի մասնակցի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

26. Մրցույթի յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն ավարտվելուց հետո անցկացվում է քվեարկություն՝ հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրված քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի վրա նշվում են քվեարկությանը մասնակցող հանձնաժողովի անդամի անունը և ազգանունը, դրվում է նրա ստորագրությունը, մրցույթի մասնակցի ազգանունը, անունը և հայրանունը: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

27. Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, մեկ առ մեկ հանում քվեաթերթիկը և բարձրաձայն հայտարարում միայն մրցույթի մասնակցի ազգանունը, անունն ու հայրանունը և տրված ձայնի կողմ կամ դեմ լինելը: Մեկից ավելի նշում պարունակող կամ ոչ մի նշում չպարունակող քվեաթերթիկը համարվում է անվավեր: Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից:

28. Քվեարկության արդյունքում ընդունված է համարվում այն որոշումը, որն ստացել է հանձնաժողովի՝ քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները, իսկ հավասար ձայների դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

29. Հանձնաժողովը քվեարկության արդյունքների հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ճանաչել մրցույթի հաղթող.

2) չճանաչել մրցույթի հաղթող:

30. Հանձնաժողովը մրցույթի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ կազմում է եզրակացություն:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

31. Մրցույթի մասնակիցը մրցույթի ավարտից հետո ծանոթանում է եզրակացության թերթի հետ և ստորագրում այն: Մրցույթի մասնակիցը ցանկության դեպքում կարող է գրավոր դիմել հանձնաժողովին և ստանալ եզրակացության թերթի պատճենը:

32. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացումից հետո՝ նույն օրն անմիջապես:

33. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել դրանց հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում՝ հանձնաժողովին, իսկ հետագայում՝ դատական կարգով:

34. Հանձնաժողովը համապատասխան պետական կառավարման մարմնի աշխատակազմի ղեկավարին փոխանցում է մրցույթի հաղթող ճանաչելու մասին որոշման, ինչպես նաև մրցույթի մասնակիցների ներկայացրած և հանձնաժողովի կողմից կազմված փաստաթղթերի պատճենները: Վարչության աշխատակազմը սույն կետով նախատեսված փաստաթղթերն ու նյութերը պահպանում և արխիվացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

35. Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո վարչության պետը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մրցույթի մասնակցի դիմումի հիման վրա մեկշաբաթյա

ժամկետում՝ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձի հետ կնքում է պայմանագիր՝ մինչև մեկ տարի ժամկետով:

36. Մրցույթի արդյունքում մեկից ավելի հաղթող ճանաչվելու դեպքում վարչության պետը, համաձայնեցնելով համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հետ, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մրցույթի մասնակիցներից մեկի հետ կնքում է պայմանագիր:

37. Մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում, ինչպես նաև սույն կարգի 15-րդ կետով սահմանված հիմքերով մրցույթը չկայանալու դեպքում երկամսյա ժամկետում անցկացվում է նոր մրցույթ:

VII. ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Լիազոր ներկայացուցչի և պետության միջև փոխհարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և լիազոր ներկայացուցչի ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության միջև կնքված պայմանագրով:

39. Լիազոր ներկայացուցիչ նշանակված անձանց անձնական գործերը կազմվում և վարվում են վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություն) պետության կողմից պետական բաժնեմասի կառավարման լիազոր ներկայացուցիչների (այսուհետ՝ լիազոր ներկայացուցիչ) աշխատանքների գնահատումը:

2. Լիազոր ներկայացուցիչների աշխատանքները գնահատվում են ըստ առանձին կազմակերպության և լիազոր ներկայացուցչի:

3. Լիազոր ներկայացուցիչների աշխատանքները գնահատվում են ըստ կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման աստիճանի, ըստ կազմակերպության նախորդ տարվա համեմատ ստացված գուտ շահույթի (ներառյալ չբախշված շահույթը) աճի, ինչպես նաև ըստ տվյալ կազմակերպությունում լիազոր ներկայացուցչի կողմից իրականացված կազմակերպչական աշխատանքների, որոնց միավորների ընդհանուր առավելագույն գումարը պետք է կազմի 100 միավոր:

4. Սահմանվում են լիազոր ներկայացուցիչների աշխատանքների արդյունավետության գնահատման հետևյալ չափորոշիչները՝

1) 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար՝

ա. կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման աստիճանի գնահատման համար՝ առավելագույնը 50 միավոր, որը պետք է արտացոլի կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված բոլոր նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման տոկոսային հանրագումարը՝ ըստ նպատակների և միջոցառումների թվի ու կատարման աստիճանի,

բ. կազմակերպության նախորդ տարվա համեմատ ստացված զուտ շահույթի աճի (ներառյալ չբախշված շահույթը), արտահայտված տոկոսներով, գնահատման համար՝ առավելագույնը 10 միավոր, ընդ որում, եթե աճը (արտահայտված տոկոսներով) բացասական է կամ հավասար է 0-ի, ապա՝ 0 միավոր, եթե ընկած է 0-2 տոկոսի տիրույթում՝ ապա՝ 3 միավոր, 2-5 տոկոսի տիրույթում՝ 5 միավոր, եթե մեծ է 5 տոկոսից՝ 10 միավոր,

գ. լիազոր ներկայացուցչի կազմակերպչական աշխատանքների գնահատման համար՝ առավելագույնը 50 միավոր, ընդ որում, բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովներին ներկայացուցչի մասնակցության աստիճանի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովներին լիազոր ներկայացուցչի մասնակցության աստիճանի)՝ 15 միավոր, լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ժողովի օրակարգ մտցված հարցերի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովների օրակարգերում ընդգրկված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված հարցերի տոկոսային հարաբերակցության)՝ 15 միավոր, և ընդունված հարցերի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովներում ընդունված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված և ընդունված հարցերի տոկոսային հարաբերակցության)՝ 20 միավոր.

2) մինչև 50 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար՝

ա. կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման աստիճանի գնահատման համար՝ առավելագույնը 20 միավոր, որը պետք է արտացոլի կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված բոլոր նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման տոկոսային հանրագումարը՝ ըստ նպատակների և միջոցառումների թվի ու կատարման աստիճանի,

բ. կազմակերպության նախորդ տարվա համեմատ ստացված զուտ շահույթի աճի (ներառյալ չբախշված շահույթը), արտահայտված տոկոսներով, գնահատման համար՝ առավելագույնը 10 միավոր, ընդ որում, եթե աճը (արտահայտված տոկոսներով) բացասական է կամ հավասար է 0-ի, ապա՝ 0 միավոր, եթե ընկած է 0-2 տոկոսի տիրույթում, ապա՝ 3 միավոր, 2-5 տոկոսի տիրույթում՝ 5 միավոր, եթե մեծ է 5 տոկոսից՝ 10 միավոր: Նոր ստեղծված կազմակերպությունների համար նախորդ տարվա շահույթը համարվում է հավասար 0-ի,

գ. լիազոր ներկայացուցչի կազմակերպչական աշխատանքների գնահատման համար՝ առավելագույնը 70 միավոր, ընդ որում, բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովներին ներկայացուցչի մասնակցության աստիճանի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովներին լիազոր ներկայացուցչի մասնակցության աստիճանի)՝ 15 միավոր, լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ժողովի օրակարգ մտցված հարցերի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովների օրակարգերում ընդգրկված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված հարցերի տոկոսային հարաբերակցության)՝ 15 միավոր, և ընդունված հարցերի համար (ըստ տարվա ընթացքում կազմակերպված ժողովներում ընդունված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված և ընդունված հարցերի տոկոսային հարաբերակցության)՝ 40 միավոր:

5. Գնահատման արդյունքներով մինչև 50 միավորը գնահատվում է անբավարար, 50-75 միավորը՝ բավարար, 75-95 միավորը՝ լավ, 95-ից բարձրը՝ գերազանց:

6. Լիազոր ներկայացուցիչներն իրենց կողմից կատարված աշխատանքների գնահատման համար անհրաժեշտ հաշվետվությունները յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն և կազմակերպության բաժնետոմսերի կառավարման լիազորությունն իրականացնող պետական կառավարման մարմին:

7. Կազմակերպությունների բաժնետոմսերի կառավարման լիազորությունն իրականացնող պետական կառավարման մարմինները սույն կարգի 6-րդ կետում նշված հաշվետվություններն ստանալուց և սույն կարգով սահմանված ձևով գնահատելուց հետո մեկամսյա ժամկետում արդյունքները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

8. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 1-ը սույն կարգի 7-րդ կետում նշված գնահատումները և դրանց վերաբերյալ ստացված առարկություններն ու առաջարկությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Քաղ. Երևան

_____ 201 թ.

(պայմանագիրը կնքող մարմնի անվանումը)

(այսուհետ՝ լիազորող), ի դեմս _____ - ի, մի
(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

կողմից, և _____
(լիազոր ներկայացուցչի ազգանունը, անունը, հայրանունը, իրավաբանական անձի դեպքում անվանումը)

(այսուհետ՝ ներկայացուցիչ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի
մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Լիազորողը հանձնարարում է, իսկ ներկայացուցիչը պարտավորվում է
լիազորողի անունից ներկայացնել պետության շահերը _____
_____ -ում, (այսուհետ՝ ընկերություն):
(առևտրային կազմակերպության անվանումը)

1.2. Ներկայացուցիչը ներկայացնում է պետության շահերն ընկերության
_____ հատ բաժնետոմսերի, որը կազմում է ընկերության ընդհանուր
(բաժնետոմսերի թիվը)

բաժնետոմսերի _____ տոկոսը, կառավարման իրավասությունների սահմաններում
Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ընկերության հիմնադիր փաստա-
թղթերին և սույն պայմանագրին համապատասխան:

2. Ներկայացուցչի պարտականությունները և իրավունքները

2.1. Ներկայացուցչի պարտականությունն է ընկերությունում պետության տնտեսական շահերի պաշտպանության ապահովումը, ինչպես նաև պետության գույքային իրավունքների և շահերի համակարգված՝ ամբողջական իրացումը:

2.2. Ներկայացուցիչը պետության անունից իրավունք ունի՝

1) մասնակցելու ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

2) մասնակցելու ընկերության կառավարմանը.

3) ստանալու ընկերության գործունեության մասին ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալու հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

4) ժողովում հանդես գալու առաջարկություններով.

5) ժողովում քվեարկելու իրեն լիազորված բաժնետոմսերի սեփականատերերի ձայների թվով:

2.3. Ներկայացուցիչն իր բոլոր գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն պայմանագրին և ընկերության կանոնադրությանը համապատասխան:

2.4. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու է ընկերությունից և համապատասխան մարմնից ստանալու ընկերության գործունեությանն առնչվող ամբողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է իր գործառույթների իրականացման համար:

2.5. Ներկայացուցիչն իր լիազորություններն իրականացնում է ի շահ պետության և ընկերության:

2.6. Ներկայացուցիչը պարտավոր է համապատասխան մարմնին գրավոր տեղեկացնել և նրանից ստանալ գրավոր թույլտվություն՝ ժողովում քվեարկելու համար, եթե ժողովում քննարկման են ներկայացվում հետևյալ հարցերը՝

1) ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը՝ նոր խմբագրությամբ.

2) ընկերության վերակազմակերպումը.

3) ընկերության լուծարումը.

4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը.

5) հայտարարված բաժնետոմսերի թվի առավելագույն չափի սահմանումը.

6) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր թվի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

8) ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների ու վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

9) ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող ընկերության այլ արժեթղթերի ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

10) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիա), բաժանումը.

11) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը:

2.7. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի լիազորողին և համապատասխան մարմին է ներկայացնում հաշվետվություն, իսկ իր նախաձեռնությամբ կամ լիազորողի և համապատասխան մարմնի ղեկավարի պահանջով՝ նաև միջանկյալ հաշվետվություններ:

2.8. Ներկայացուցիչը պարտավոր է լիազորողին համաձայնեցման ներկայացնել սույն պայմանագրի 2.6-րդ կետում նշված հարցերի վերաբերյալ առաջարկություններ՝ ժողովի գումարման նշանակված ամսաթվից ոչ ուշ, քան 20 օր առաջ:

2.9. Լիազորողի ցուցումների բացակայության դեպքում ներկայացուցիչը քվեարկում է ինքնուրույն՝ գործելով լիազորողի շահերից, որի մասին տեղյակ է պահում լիազորողին:

2.10. Ներկայացուցիչն իրավունք չունի տեղեկություններ հրապարակելու երրորդ անձանց, որոնք հայտնի են դարձել իր վրա դրված լիազորությունների կատարման ժամանակ, և իրավունք չունի այդ տեղեկություններն օգտագործելու պետության շահերին հակասող նպատակներով:

2.11. Ներկայացուցիչն ուսումնասիրում և քննարկում է ընկերության տարեկան հաշվետվությունը՝ նախքան ժողովում այն ներկայացնելը:

3. Լիազորողի պարտականությունները

3.1. Լիազորողը ներկայացուցչի վրա դրված պարտականությունների արդյունավետ կատարման համար պարտավորվում է ժամանակին քննարկել ներկայացուցչի առաջարկությունները, եթե ժողովի օրակարգում նախատեսվում է այն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունում, որոնք նշված են սույն պայմանագրի 2.6-րդ կետում, և տալ համապատասխան ցուցումներ:

3.2. Լիազորողը պարտավորվում է ներկայացուցչին իրատեսական ժամկետում տեղեկացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի օտարման և ձայների թվի համապատասխան փոփոխության մասին:

3.3. Լիազորողը պարտավոր է ներկայացուցչին ուղարկել նրա իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Օրենքին և սույն պայմանագրին համապատասխան՝ ներկայացուցիչը պատասխանատվություն է կրում իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.2. Ներկայացուցչի անօրինական գործողություններով լիազորողին պատճառված նյութական վնասը ենթակա է փոխհատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Ներկայացուցիչը պատասխանատվություն չի կրում իր կողմից կողմ քվեարկված որոշումների բացասական հետևանքների համար, եթե քվեարկությունը կատարվել է լիազորողի կողմից ստացված գրավոր ցուցումներին համապատասխան:

5. Ներկայացուցչի վարձատրությունը

5.1. Ներկայացուցիչն ստանում է աշխատավարձ՝ ամսական _____ դրամի չափով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

5.2. Վարձատրության այլ տեսակները (պարգևատրումներ, լրացուցիչ վճարներ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը և վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

6.2. Պայմանագիրը դադարում է դրա գործողության ժամկետի լրացման, ընկերության վերակազմակերպման և լուծարման, պետական բաժնետոմսերի փաթեթի վաճառքի, լիազորողի հանձնարարության վերացման, ներկայացուցչի կողմից հանձնարարության կատարումից հրաժարման, ինչպես նաև ներկայացուցչին անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում:

6.3. Լիազորողն իրավունք ունի պայմանագիրը վաղաժամկետ լուծելու՝

1) ներկայացուցչի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում.

2) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի՝ պետությանն ամրակցման ժամկետի կրճատման մասին որոշում ընդունելու և սահմանված կարգով դրանց իրացման դեպքում.

3) ներկայացուցչի կողմից սահմանված հաշվետվությունը ներկայացնելու ժամկետների խախտման դեպքում, ինչպես նաև ներկայացված հաշվետվությունների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անբավարար գնահատվելու դեպքում.

4) այնպիսի խոչընդոտների ի հայտ գալու դեպքում, որոնց արդյունքում ներկայացուցիչը չի կարող իրականացնել իր լիազորությունները.

5) առանց լիազորողի համաձայնության՝ ներկայացուցչի կողմից այլ բաժնետերերի ներկայացուցչի լիազորությունների իրականացման դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

6.4. Սույն պայմանագրի 6.3-րդ կետում նշված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում լիազորողը պարտավորությունների կատարման դադարման օրվանից ոչ ուշ, քան երկու ամիս առաջ համապատասխան ծանուցում է ուղարկում ներկայացուցչին:

6.5. Ներկայացուցիչը կարող է հրաժարվել պայմանագրային պարտավորությունների կատարումից՝ համապատասխան ծանուցում ուղարկելով լիազորողին՝ այդ պարտավորությունների կատարման դադարման օրվանից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

ԼԻԱԶՈՐՈՂ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

(անունը, ազգանունը, հայրանունը)

(ստորագրությունը)

(անձնագրային տվյալները, հասցեն)

(ստորագրությունը)

_____ 20 թ.

_____ 20 թ.

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ձ Ե Վ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ

Ընկերության մասին	
Ընկերության լրիվ անվանումը	
Իրավաբանական անձի գտնվելու վայրը	
Կանոնադրական կապիտալի մեծությունը (փաստացի)	
Ընկերության կանոնադրական կապիտալում պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի) մեծությունը	
Ընկերության տնօրենի (գործադիր տնօրենի) անունը, ազգանունը, հայրանունը կամ տեղեկություններ կառավարող կազմակերպության (կառավարչի) մասին	
Լիազոր ներկայացուցչի մասին	
Լիազոր ներկայացուցչի անունը, ազգանունը, հայրանունը	
Լիազոր ներկայացուցչի զբաղեցրած պաշտոնը	
Լիազոր ներկայացուցչի նշանակման մասին ակտը՝ համարը և ամսաթիվը	
Հեռախոսահամարը (ֆաքսը)	

2. Տեղեկություններ կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված նպատակների իրագործման և նախատեսված միջոցառումների իրականացման աստիճանի մասին

NN ը/կ	Կազմակերպության գործարար ծրագրով տվյալ տարվա համար սահմանված նպատակները և նախատեսված միջոցառումները	Կատարման աստիճանը (տոկոս)
1.		
2.		
3.		
4.		
5.		
6.		
7.		
8.		
9.		
Միջինը		

3. Տեղեկություններ կազմակերպության՝ նախորդ տարվա համեմատ ստացած զուտ շահույթի աճի (ներառյալ չբախշված շահույթը) մասին

NN ը/կ	Հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա ընթացքում կազմակերպության ստացած զուտ շահույթը՝ ներառյալ չբախշված շահույթը (հազ. դրամ)	Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության ստացած զուտ շահույթը՝ ներառյալ չբախշված շահույթը (հազ. դրամ)	Զուտ շահույթի աճը (տոկոս)
1.			
2.			
3.			
Ծանոթագրություն			

4. Տեղեկություններ լիազոր ներկայացուցչի կազմակերպչական աշխատանքների մասին

NN ը/կ	Ցուցանիշը	Քանակը
1.	Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովների թիվը (հաշվետու ժամանակահատվածում)	
2.	Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովների թիվը, որոնց լիազոր ներկայացուցիչը մասնակցել է (հաշվետու ժամանակահատվածում)	
3.	Բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովներին ներկայացուցչի մասնակցության աստիճանը (տող 2՝ հարաբերած տող 1՝ բազմապատկած 100)	
4.	Հաշվետու ժամանակահատվածում բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովների օրակարգում ընդգրկված հարցերի ընդհանուր թիվը	
5.	Հաշվետու ժամանակահատվածում բաժնետերերի (մասնակիցների) ընդհանուր ժողովների օրակարգերում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ընդգրկված հարցերի ընդհանուր թիվը	
6.	Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված ժողովների օրակարգերում ընդգրկված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված հարցերի տոկոսային հարաբերակցությունը (տող 5՝ հարաբերած տող 4՝ բազմապատկած 100)	
7.	Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված ժողովներում ընդունված հարցերի ընդհանուր թիվը	
8.	Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված ժողովներում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված և ընդունված հարցերի թիվը	
9.	Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված ժողովներում ընդունված հարցերի ընդհանուր թվում լիազոր ներկայացուցչի նախաձեռնությամբ ներկայացված և ընդունված հարցերի տոկոսային հարաբերակցությունը (տող 8՝ հարաբերած տող 7՝ բազմապատկած 100)	

ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ